ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀՌՑ-ՀՄԱԱՇՁԲ-18/33» ծածկագրով արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգով Սյունիքի մարզի Կապան-2 և Շիկահող հեռուստակայանները սնող բարձրավոլտ օդային գծերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 01.11.2018թ. ժամը 12.00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ/
Ս. Դավթյանը

Անդամներ՝
Գնման Պատասխանատու /Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ/ Ա.Պողոսյանը
Ա. Գաբրիելյանը
Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ/՝ Վ. Հակոբյանը
Ռ. Սահակյանը

Հանձնաժողովի քարտուղար՝
Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/ՄՀմ/ Մ. Նիկոլյանը

1. Տեղեկություն հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին

Ընդունել ի գիտություն, որ «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲ ընկերության /ՀՀՌՑ/ կարիքների համար **Սյունիքի մարզի Կապան-2 և Շիկահող հեռուստակայանները սնող բարձրավոլտ օդային գծերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման** նպատակով ս.թ. հոկտեմբերի 29-ին էլեկտրոնային ARMEPS համակարգով հայտարարվել է **ՀՀՌՑ-ՀՄԱԱՇՁԲ-18/33** ծածկագրով **արտակարգ կամ չնախատեսված այլ իրավիճակի առաջացման հիմքով պայմանավորված մեկ անձից գնում կատարելու ընթացակարգով** /Ընթացակարգ/: Հայտերը բացվել են էլեկտրոնային www.armeps.am կայքի միջոցով, ս.թ. նոյեմբերի 1-ին, ժամը 12.00-ին:

2. Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը, տվյալները

N	Մասնակցի անվանումը	էլ. փոստի հասցեն	ՀՎՀՀ
1	Նուռտել ՍՊԸ	Ohan. ghevondyan@nur-tel.com	00059627

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին

3.1 Նուռտել ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը, համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին և armeps.am համակարգով գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են բավարար:

4. Մասնակիցների առաջարկած գները, նախահաշվային գինը

ՀՀ դրամ

N	Մասնակիցների անվանումը	1 չափաբաժին **Սյունիքի մարզի Շիկահող հեռուստակայանը սնող բարձրավոլտ օդային գծերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերում**			2 չափաբաժին **Սյունիքի մարզի Կապան-2 հեռուստակայանը սնող բարձրավոլտ օդային գծերի վերանորոգման աշխատանքների ձեռքբերում**		
		Նախահաշվային գին՝ **3 500 000** ՀՀ դրամ , ներ. ԱԱՀ			Նախահաշվային գին՝ **4 000 000** ՀՀ դրամ , ներ. ԱԱՀ		
		արժեք	ԱԱՀ	ընդհանուր գումար	արժեք	ԱԱՀ	ընդհանուր գումար
1	Նուռտել ՍՊԸ	2916660	583332	**3499992**	3333333	666666.6	**3999999.6**

5. <u>Հանձնաժողովը որոշեց</u>

5.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 40-րդ կետի 5-րդ ենթակետով՝

ա) առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել Նուռտել ՍՊ ընկերությունը 1 և 2-ին չափաբաժիններով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5.2 Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀՀ ԿԱ Պետական եկամուտների կոմիտեից կատարել հարցում հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5.3 Գնահատման նիստը հրավիրել ս.թ. նոյեմբերի 6-ին, ժամը 12.00-ին, ՀՀ, ք. Երևան, Նորք, Հովսեփյան 95 հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ Ս. Դավթյան

անդամներ՝ Ա. Պողոսյան

Ա. Գաբրիելյան

Վ. Հակոբյան

Ռ. Սահակյան

քարտուղար՝ Մ. Նիկոլյան